ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ (1986 թ.)

Բուլղարիա

Պլովդիվում տեղի ունեցած միջազգային տոնավաճառում ոսկե մեդալի է արժանացել «Հայաստան» ձեռագործ գորգը, որ ստեղծել են Երևանի «Հայգորգ» միավորման գորգագործները։

«Արև», 22 ապրիլի 1986

Սոֆիայում, 1986 թ. ապրիլի 24-ին բուլղարահայերը միտինգ են կազմակերպել նվիրված Մեծ եղեռնի 71-րդ տարելիցին։ Միտինգում ընդունված «Հայտարարության» մեջ ասված է. «Մենք, թուրքական ստրկարարներու անգութ ցեղասպանության միլիոն ու կես անմեղ զոհերու, անապատները աքսորվածներու և բանտերու մեջ մեռածներու զավակներն ու դուստրերը, թոռներն ու ծոռները կնշավակենք թուրք շովինիստներու քարբարոսությունը և հաստատակամորեն կհայտարարենք, թե խաղաղության վճռական պայքար պիտի մղենք, որպեսզի երբեք չկրկնվին նման ահավոր ողբերգություններ։ Մենք և ապագա սերունդները երբեք պիտի չմոռանանք և ընդմիշտ պիտի պահպանենք մեր սրտերուն մեջ հայ ժողովրդի հանդեպ դաժան ցեղասպանության զոհերու լուսավոր հիշատակը»։

Արևմտահայության ցեղասպանության 71-րդ տարեդարձին նվիրված միտինգներ ու սգահանդեսներ են կազմակերպվել Ռուսեում, Պլովդիվում, Վառնայում, Խասկովոյում, Ցամբոլում և այլ քաղաքներում «Երևան» կազմակերպության տեղական վարչությունների կողմից։ Այդ սգահանդեսներին մասնակցել են բուլղարական քաղաքական-հասարակական կազմակերպությունների անդամներ։ Մեծ ոճիրի կապակցությամբ հոդվածներ են տպագրվել բուլղարական թերթերում, տրվել են ռադիոհաղորդումներ, ցուցադրվել են վավերական փաստաթղթեր և լուսանկարներ։

«Երևան», 26 ապրիլի 1986

«Երևան», 5 մայիսի 1986

«Երևան» մշակութային միության Վառնայի մասնաճյուղի ատենապետ Մելքոն Փափաղյանը մի հարցազրույցի ժամանակ տեղեկություններ է հայտնել Բուլղարիայի հայկական գաղթօջախի սասին։ «Արևում» հրապարակված են նրա հետևյալ պատասխանները։

Մշակութային միությունը հիմնվել է 1921-ին «ՀՕԿ» անվան տակ, որի նպատակն է եղել նյութապես և բարոյապես օժանդակել նորաստեղծ Խորհրդային Հայաստանին։ «ՀՕԿ»-ը տևում է մինչև 1934 թ., իսկ ֆաշիստական կառավարության տապալումից հետո, 1944-ին, վերածնվում է «Երևան մշակութային միություն» անվան տակ։ Կենտրոնական վարչությունը գտնվում է Սոֆիայում, որի մասնաճյուղերը գործում են Պլովդիվում, Վառնայում, Ռուսեում, Սլիվենում, Ցամբոլում և Բուրգասում։ Միության պաշտոնաթերթն է «Երևան» շաբաթաթերթը։ Կազմակերպվում են զանազան դասախոսություններ հայերեն և բուլղարերեն։ Կան հայերեն դասընթացներ, որովհետև դպրոցում հայ աշակերտների սակավության պատճառով կանոնավոր կերպով հայերեն դասավանդել հնարավոր չէ։ Միջոցառումների մեծ մասի ծախսերը հոգում է կառավարությունը։

628 թ. սկսած Բուլղարիայում եղել են հայկական գաղթօջախներ։ 1908-ին Բուլղարիայի 17 քաղաքներում բնակվող հայերի թիվը մոտ 10 000 է եղել։ Համիդյան կոտորածներից և 1912—1913 թթ. Բալկանյան պատերազմից հետո հայերի թիվը հասել է 35 000-ի, 1915-ից հետո՝ 50 000-ի։ Ներկայումս Բուլղարիայի հայերի թիվը 20 000 է, մեծ մասը ներգաղթել են Մայր հայրենիք կամ մեկնել Ամերիկա։ Վառնայի հայկական գաղթօջախը այժմ կազմում է 2500—3000 մարդ։ Բուլղարիայի հայկական գաղթօջախը սերտ կապեր է պահպանում Սովետական Հայաստանի հետ, Հունաստանի հայկական գաղթօջախի և այլ երկրների հայության հետ։

«Արև», 24 հուլիսի 1986

Գ Դ Հ

Հալլեի Մարտին Լյութերի անվան համալսարանի հայագիտական, աստվածաբանական, դր.

Լեփսիուսի վավերագրերի բաժինների և արևելագիտության ու պատմության ֆակուլտետների նախաձեռնությամբ 1986 թ. փետրվարի 17—18-ին հրավիրվել է միջազգային գիտաժողով՝ նվիրված Յոհաննես Լեփսիուսի հիշատակին, նրա մահվան 60-րդ տարելիցի առթիվ։ Գիտաժողովի կազմակերպիչն է պրոֆ. Հերման Գոլցը։

Այս գիտաժողովին մասնակցել են Գերմանիայի համալսարանների անվանի դասախոսներ, հայ-գերմանական ընկերության անդամներ, ինչպես նաև ներկայացուցիչներ Հայաստանից, Բելգիայից, Իտալիայից և այլ երկրներից։

Ինչպես հայանում է «Նոր աշխարհը», Լեփսիուսի արխիվը պարունակում է ավելի քան 50 000 վավերագրեր, նամակներ, հուշագրություններ, հոդվածներ, գրքույկներ և պարբերականներ, որոնց ուսումնասիրման և հրատարակման գործով զբաղվում է պրոֆ. Հերման Գոլցը։

«Նոր Աշխարհ», 28 հունվարի 1986

«Արարատ», 9 ապրիլի 1986

Արևմտյան Բեռլին

Արևմտյան Բեռլինում ապրիլի 19-ից մինչև մայիսի 13-ը տեղի են ունեցել «Հայաստանի օրերը», ամենամյա «Սովետական Միության օրերը» շարքից։ Կազմակերպիչներն են եղել Գերմանա-սովետական բարեկամության ընկերությունը, Բեռլինի բողոքական ակադեմիան, Բեռլինի հայ գաղութը և այլ կազմակերպություններ։ «Հաուս դեռ Կիրխե» սրահում ցուցադրվել են միջնադարյան հայերեն ձեռագրեր, տպագիր գրքեր, արդի հայ նկարիչների գործեր, կիրառական արվեստի նմուշներ։ Միջոցառմանը մասնակցել են «Տաղարան» միջնադարյան երաժշտության խումբը, «Եղեգն» պարի խումբը։ Ցուցադրվել են հայկական ֆիլմեր։

«Սարդարապատ», 11 հունիսի 1986

Լիբանան

«Արարատում» լույս է տեսել հոդված Սովետական Հայաստանի 66-ամյակի կապակցությամբ։ Հակիրճ պատմական ակնարկից հետո թերթը հանգամանորեն կանգ է առել հայ ժողովրդի համար նոյեմբերի 29-ի ունեցած շրջադարձային նշանակության վրա։

«Արարատ», 4 դեկտեմբերի 1986

Նոյեմբերի 30-ին Բեյրութում վախճանվել է անվանի բանաստեղծ, հրապարակախոս ու հասարակական գործիչ Գառնիկ Ադդարյանը։

«Աշխարհ», 13 դեկտեմբերի 1986

Եգիպտոս

Կահիրեում լույս է տեսել Ֆուադ Հասան Հաֆեզի 576 էջանոց «Հայ ժողովրդի պատմությունը, սկիզբեն մինչև այսօր» վերնագրով գիրքը։

«Զարթոնք», 11 մարտի 1986

1985 թ. դեկտեմբերին Կահիրեի Ամերիկյան համալսարանում Հայ գեղարվեստասիրաց միության և Կոկանյան սրահի նախաձեռնությամբ նշվել է Վահան Տերյանի ծննդյան 100-ամյակը։

«Զարթոնք», 11 մարտի 1986

Իրան

Թեհրանում, փետրվարի 7-ին, «Նաիրի» սրահում Թեհրանի հայոց դպրոցների հայ ուսուցիչների միության նախաձեռնությամբ տեղի է ունեցել հայ ժողովրդի պատմությանը նվիրված հրապարակային դասախոսություն։ Բանախոսել է Արման Հարությունյանը։

«Զարթոնք», 28 փետրվարի 1986

Իրանահայ գաղութի վերջին հրատարակություններից է Ալպերթ Ծերունյանի «Ուիլյամ Սարոյանի հիշատակին» անունով գիրքը, որտեղ տեղ են գտել 25-ից ավելի լուսանկարներ։

«Արև», 21 օգոստոսի 1986

Հունաստան

«Երևան» թերթում կարդում ենք. «Ինչպես հաղորդում են հունական գործակալությունները, օրերս Հունաստանի մայրաքաղաք Աթենքում տեղի է ունեցել մամուլի ասուլիս տեղական ու արտասահմանյան լրագրողների, ռադիոյի ու հեռուստատեսության ներկայացուցիչների հետ։ Պրեսկոնֆերանսում ասվել է, թե 55 հույն քաղաքական, գիտական ու մշակութային գործիչներ, ինչպես նաև լրագրողներ, ստորագրել են հայտարարություն՝ Թուրքիայում 1915 թ. հայ ժողովրդի հանդեպ կատարված ցեղասպանության 71-ամյակի առթիվ։

Այնուհետև թերթն ավելացնում է, որ հայտարարության մեջ կոչ է արվել հարգել 1915-ի ցեղասպանության զոհերի հիշատակը, վերականգնել պատմական ճշմարտությունը։

«Երևան», 8 մարտի 1986

Աթենքում սեպտեմբերի 14-ին հանդիսավորությամբ կատարվել է «Հայկական հրապարակի» բացումը։ Մարմարե տախտակի վրա գրված է «Հելլեն և հայ բարեկամության անքակտելի հավատքով հայ ժողովրդի արդարահատուց—

ման համար։ Բացման արարողությանը ներկա են եղել Աթենքի պաշտոնական անձինք, ինչպես նաև հասարակական ու կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներ և բազմաթիվ հույներ ու հայեր։

«Երևան», 4 հոկտեմբերի 1986

Հունաստան, Լիբանան, Կիպրոս, Կանադա

Մեծ եղեռնի 71-րդ տարեդարձի առթիվ մի շարք երկրներում տեղի են ունեցել հանդիսություններ, ժողովներ, միտինգներ, ցույցեր։ Հունաստանում բողոքի ցույց է կատարվել Թուրքական դեսպանության առաջ։ Բեյրութում անց են կացվել տարբեր միջոցառումներ, ժողովներ, սգո միտինգ։

Կիպրոսի մայրաքաղաք Նիկոզիայում ապրիլի 24-ին նշվել է Մեծ եղեռնի 71-րդ տարեդարձը քաղաքական ու հասարակական մի շարք գործիչների ներկայությամբ։ Կիպրոսի պառլամենտը նորից բանաձև է ընդունել հայոց ցեղասպանության ճանաչման համար։ Մամուլը մեծ տեղ է հատկացրել այդ բանաձևին, տպվել են նաև հոդվածներ Մեծ եղեռնի մասին։

Կանադայի մայրաքաղաք Օտտավայում ապրիլի 24-ին տեղի է ունեցել քաղաքական հավաք 2000 հոգու մասնակցությամբ։ Բողոքի ցույց է կատարվել Օտտավայի Թուրքական դեսպանության առաջ։ Զանազան միջոցառումներ են կազմակերպվել Կանադայի այլ քաղաքներում՝ Մոնրեալում, Քվեբեքում, Օնթարիոյում, Տորոնտոյում և այլն։

Նման ցույցեր ու հանդիսություններ են տեղի ունեցել նաև Հարավային Ամերիկայի երկրներում, ԱՄՆ-ում և այլուր։

«Երևան», 5, 24 մայիսի 1986

Արգենտինա

Արգենտինայի «Էլ փերիոտիստա» շաբաթաթերթի մայիսի 30-հունիսի 5-ի համարներում հրատարակված է 16 էջանոց մի հավելված «Ողբերգական ժողովուրդներ» ընդհանուր վերնագրով, որի առաջին համարը նվիրված է հայ ժողովրդին։ Հոդվածում հակիրճ տրված է հայ ժողովրդի պատմության ուրվագիծը իր ծագումից մինչև 1915 թ. Մեծ եղեռնը։ Բերված են փաստաթղթեր, արգենտինյան թերթերի հաղորդումներ և երկու վերապրողների վկայություններ։

«Երևան», 5 հուլիսի 1986

Բրազիլիա

Սան-Պաուլոյի կառավարչի հրամանով հայկական եկեղեցիների և եղեռնի հուշարձանի մոտ գտնվող մետրոյի կայանը վերանվանվել է «Արմենիա»։ Հուշատախտակի բացման արարողությանը ներկա են եղել պաշտոնական անձինք։

«Արև», 11 փետրվարի 1986

Ուրուգվայ

Լույս է տեսել վավերագրական մի աշխատություն «Հայկական ցեղասպանությունը 1915-ի մամուլին մեջ» խորագրով, որի հեղինակն է Դանիել Գարամանուկյանը։

«Երևան», 5 հուլիսի 1986

Ավստրիա

Ավստրահայ գաղութը արդեն երկու տարի է, որ հրապարակում է «Հրայրք» հասարակական-մշակութային 20 էջանոց շաբաթաթերթ, խմբագրությամբ Հրայր Տեր-Ղազարյանի։

Գաղութը վերջերս նշել է ավստրո-հայկական մշակութային ընկերության հիմնադրման 10-ամյակը։

«Արև», 21 օգոստոսի 1986

Վիեննայում մեծ շուքով կատարվել է Հայ մշակութային տան բացումը Վիեննայի քաղաքագլուխ և Ազգային համագումարի նախագահ Լուի Մերմայի մասնակցությամբ։

«Արև», 30 հունվարի 1986

Ավստրիա, Արևմտյան Գերմանիա, Շվեդիա

Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ դր. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը Աթենք ժամանելով հարցազրույց է ունեցել Զավեն Գ. Գրիգորյանի հետ, ընդհանուր տեղեկություններ հայտնելով Եվրոպայի հայ գաղթօջախների մասին։ Ըստ նրա տվյալների, հայերը Ավստրիայում ապրում են XVIII դարից սկսած։ 1780-ական թթ. մարդահամարի տվյալներով Վիեննայում 21 հայ ընտանիք է ապրել։ Ավստրիայում այժմ ապրում են մոտ 2000 հայեր, հիմնականում՝ Վիեննայում։ Համայնքի գլխավոր մարմինն է եկեղեցական վարչությունը, որի հովանավորությամբ գործում է «Հովհաննես Շիրազ» շաբաթօրյա գպրոցը։ Համայնքն ունի նաև ուսանողական-երիտասարդական միություն, Հ. Բ. Հ. միության Վիեննայի մասնաճյուղ, ավստրահայ մշակութային ընկերություն, ինչպես նաև երգչախումբ ու պարի խումբ։ 1984 թ. սկսած լույս է տեսնում «Հրայրք» շաբաթաթերթը։

Արևմտյան Գերմանիայի հայկական գաղութը համեմատաբար նոր է։ Հայերը հիմնականում բնակվում են Ֆրանկֆուրտում, Քյոլնում, Դյու-

սելզորֆում, Համբուրգում, Արևմտյան Բեռլինում, Արևմտյան Գերմանիայում ապրում են մոտ 10 000 հայեր, կան նաև մշակութային միություններ։ Հայերի մի մասը թրքախոս է կամ վատ է տիրապետում մայրենի լեզվին։ Ազգային ընկերությունները կազմակերպել են հայերենի ուսուցման մեկօրյա դասընթացներ։

Շվեդիայի հայությունը գլխավորապես կենտրոնացած է Սառկհոլմում, որտեղ եկեղեցական վարչությունը կից գործում է մշակութային միություն։ Սառկհոլմում այժմ ապրում է 800—1000 հայ։

«Նոր աշխարհ», 15 հուլիսի 1986

Երևան

Մարսելի ազգային երաժշտանոցում, «Արամ Խաչատուրյան» հիմնարկի նախաձեռնությամբ տրվել է Արամ Խաչատրյանի կիսանդրին, որի հեղինակն է քանդակագործ Լևոն Թոքմաջյանը։

Նույն օրը երեկոյան Մարսելի օպերայի թատրոնում տեղի է ունեցել մեծարանքի հանդիսություն նվիրված Առնո Բաբաջանյանի հիշատակին։

«Արարատ», 28 հունվարի 1986

Վահան Տերյանի ծննդյան 100-ամյակը նշվել է Փարիզում Հ. Բ. Ը. միության Փարիզի մասնաճյուղի և նույնայն բարեկամական միության նախաձեռնությամբ։

«Արև», 30 հունվարի 1986

Փարիզի Ալեք Մանուկյան մշակութային երիտասարդական կենտրոնում ֆրանսահայ գրողների նախաձեռնությամբ կազմակերպվել է Ծ. Պերպերյանի դասախոսությունը՝ «Հայ մշակույթի ծագումն ու զարգացումը» թեմայով։

«Արև», 15 փետրվարի 1986

Փարիզի «Սիփան-Կոմիտաս» 60 հոգիանոց երգչախումբը, որի ղեկավարն է Կարպիս Ափրիկյանը, ելույթ է ունեցել, որին ներկա են եղել մոտ 400 հանդիսականներ։

«Արև», 15 փետրվարի 1986

Մոնպիլյեում փետրվարի 16-ին հանդիսավորությամբ կատարվել է 1915 թ. Թուրքիայի կողմից կործանված հայերի ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի բացումը։ Սա Ֆրանսիայում պաշտոնապես կանգնեցված երկրորդ հուշարձանն է, նվիրված եղեռնի զոհերին։ Հուշարձանի վրա հայերեն և ֆրանսերեն գրված է. «1915-ին թուրք ղեկավարների տնօրինությամբ կատարված ցեղասպանության 1,5 միլիոն հայ նահատակներու հիշատակին»։ Հուշակոթողը կազմված է 12 սյուներից, նրա վրա արձանագրված են եղեռնին զոհ դարձած ականավոր հայերի անունները։

«Արարատ», 8 մարտի 1986

«Արարատ», 22 մարտի 1986

Փարիզում լույս է տեսել Յոհաննես Լեփսիուսի «Արխիվները» ֆրանսերեն թարգմանությամբ (312 էջ)։ Գրքի մասին հակիրճ գրախոսական է տպված „Le monde diplomatique" ամսաթերթի օգոստոսյան համարում, որում ի միջի այլոց ասված է. «Գիրքը ոչ միայն ճնշիչ վկայություն մըն է, այլ նաև գրավոր փաստը «ազգի մը սպանության», որ 70 տարիներե ի վեր կուլացվի»։

«Սարգարապատ», 10 սեպտեմբերի 1986

Փարիզում սեպտեմբերի 7-ին մահացել է անվանի կոմպոզիտոր-խմբավար Արա Պարթևյանը։ Նա շուրջ երեսուն մեներգեր և քանից ավելի խմբերգեր է հորինել Խաչատրյանի, Տերյանի, Դուրյանի, Մեծարենցի և այլոց բանաստեղծությունների հիման վրա։ Նա հեղինակ է նաև օպերային և սիմֆոնիկ մի շարք ստեղծագործություններ։

«Արարատ», 27 սեպտեմբերի 1986

«Աշխարհ»-ը թերթը հայտնում է, որ հոկտեմբերի 11-ին 88 տարեկան հասակում մահացել է հռչակավոր հնդեվրոպարան, ֆրանսիական ակադեմիայի անդամ Ժորժ Դյումեզիլը։ Նա եղել է Revue des Etudes Armeniennes հանդեսի հիմնադիրներից մեկը և ապա խմբագիրը։ Լինելով Collège de France-ի պրոֆեսոր, նա հիմնում է հնդեվրոպական քաղաքակրթությունների ամբիոն։ Ֆրանսիական մամուլը, տեղեկացնելով այդ մասին, լայնորեն անդրադարձել է նրա լուսավոր գիտական ժառանգությանը։

«Աշխարհ», 25 հոկտեմբերի 1986

Նոյեմբերի 30-ին Փարիզում, Ալեք Մանուկյան մշակութային կենտրոնում տեղի է ունեցել Սովետական Հայաստանի 66-ամյակին նվիրված ասամբլեա։ Ինչպես հայտնում է «Աշխարհը», «17 կազմակերպություններ իրենց ջանքերը կմիկտեղեն ամեն տարի առնելու Հայաստանի վերածնունդը։ Այս կապակցությամբ Ֆրանս-սովետական ընկերության նախագահության անդամ Լուի Բայոն և Ֆրանսիայում Սովետական Միության դեսպան Յակով Ռյարովը, ինչպես նաև սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Կ. Դալլաքյանը

և ուրիշներ ջերմ ելույթներ են ունեցել։ Տրվել է ճոխ համերգ։

«Աշխարհի» նոյեմբերի 29-ի համարում, ինչպես և սփյուռքահայ այլ թերթերում, տրված է խմբագրական հոդված «Հայության վերածնունդը» խորագրով։

«Աշխարհ», 29 նոյեմբերի.
13 դեկտեմբերի 1986

«Աշխարհից» տեղեկանում ենք, որ Նիսի Հայ մշակութային միությունը արդեն երեք տարի է, որ կազմակերպում է հրապարակային զեկուցումներ, ժողովրդական հանդեսներ։ Այդ միջոցառումների շարքին է պատկանում նաև տիկ. Լիլի Ապրիյանի դասախոսությունը՝ «Ակնարկ մը հայ երաժշտության ծագման և զարգացման ուղիներուն վրա» թեմայի շուրջ։ Նա հակիրճ կերպով ներկայացրել է հայ երաժշտությունը սկսած հեթանոսական շրջանից, ընդգրկելով միջնադարյան հոգևոր և աշխարհիկ երաժշտությունը։ Ապա անդրադարձել է հայ ժողովրդական գեղջկական երաժշտությանը, դրանց գրառման հարցերին, որում մեծ դեր են խաղացել Կարա-Մուրզան, Մակար Եկմալյանը և Կոմիտասը։

Վերջում կանգ է առել Սովետական Հայաստանի այսօրվա երաժիշտների ստեղծագործությունների վրա։

«Աշխարհ», 13 դեկտեմբերի 1986

Հ. Բ. Ը. Մ.-ի 80-ամյակի կապակցությամբ Ֆրանսիայում կազմակերպվել են մի շարք ցուցահանդեսներ, որոնցում ներկայացված են հին հայկական արվեստի առարկաներ, ինչպես նաև Գառոդի, Ժանսեմի և այլ արվեստագետների ստեղծագործություններ։

«Աշխարհ», 13 դեկտեմբերի 1986

Ֆրանսիական կառավարությունը մի հիմնարկության շենքի գետնահարկը տրամադրել է հայկական թանգարանի համար, որտեղ, բացի հիմնարկությանը պատկանող արվեստի գանձերից, բացված է «Հայկական արվեստը ֆրանսիական հավաքածուներում» բաժինը։ Պրոֆ. Ժան Պիեռ Մահեն հայերենով ներկայացրել է ցուցադրված գործերը։ Բացմանը ներկա են եղել հիմնարկության հիմնադիր Նուրհան Ֆրենկյանը, Փարիզի առաջնորդ Գյուտ Եպս. Նագգաշյանը և ուրիշներ։

«Աշխարհ», 13 դեկտեմբերի 1986

Անգլիա

Հ. Բ. Ը. միության Լոնդոնի մասնաճյուղի մշակութային հանձնախումբը 1985 թ. դեկտեմբերին կազմակերպել է գրական երեկո՝ նվիրված Վահան Տերյանի ծննդյան 100-ամյակին։ Տերյանի կյանքի և ստեղծագործության մասին է խոսել Կարպիս Եսայանը։ Վերջում տրվել է համերգ։

«Նոր աշխարհ», 28 հունվարի 1986

Հ. Բ. Ը. Մ-ի մշակութային հանձնախումբը ապրիլի 4-ին Լոնդոնում կազմակերպել է գրական երեկույթ, նվիրված Ապրիլյան եղեռնի նահատակ գրողներ Վարուժանի, Զոհրապի, Սիամանթոյի հիշատակին։

Լոնդոնում մայիսի 10-ին նշվել է Կոմիտասի մահվան 50-ամյակը։ Հ. Բ. Ը. Մ-ի մշակութային հանձնախմբի և «Արարատ» երգչախմբի նախաձեռնությամբ կազմակերպվել է գեղարվեստական բաժին, որին մասնակցել են երգիչներ, դաշնակահարներ ու ասմունքողներ։

«Սարդարապատ», 11 հունիսի 1986

Հ. Բ. Ը. միության Լոնդոնի մասնաճյուղի անդամները և լոնդոնահայ այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ ապրիլի 5-ին հավաքվել են տոնելու Միության հիմնադրման 80-ամյակը։

«Սարդարապատ», 11 հունիսի 1986

Իտալիա

Իտալիայում շքեղ հրատարակությամբ լույս է տեսել «Հայերը» վերնագրով գիրք, բաղկացած 10 գլխից (287 էջ)։ «Զարթոնքում» կարդում ենք. «Հատորը արդյունք է խմբական աշխատանքի։ Մեկ էջի մեջ տրված ներածականեն կիմանանք թե «Հայերը» գիրքը պետք է նկատել որպես համադրություն 15 տարի առաջ սկսած Միլանի Հայ արվեստի և վավերագրությանց կենտրոնին, Հայաստանի գիտ. ակադեմիայի գործակցության, հովանավորված Իտալիո արտաքին գործոց նախարարությենեն։ Գրքի առանձին գլուխների հեղինակներն են հանրածանոթ գիտնականներ, ճարտարապետներ՝ Աղրիանո Ալպագո Նովելլոն, Լևոն Զեքիյանը, Դարրիելլա Ուլուհոջյանը, Հակոբիկ Մանուկյանը, Ջուլիո Եէնին, Ալպերթո Փենսան, որոնք անդրադարձել են հայ ժողովրդի պատմության, ճարտարապետության, լեզվի, մշակույթի և այլ հարցերին։ Հատորի վերջում կետեղված է հարուստ մատենագիտություն։

«Զարթոնք», 4 հունվարի 1986

Իտալացի ռեժիսոր Ագոստինո Մարֆելլոն նախաձեռնել է ստեղծել «Մատաղ» վերնագրով մի ֆիլմ, որը պետք է ներկայացնի 1880-ից մինչև 1915-ի ժամանակահատվածում հայ ժո-

դովրդի կրած անմարդկային տառապանքը։ Ինչպես հայտնում է «Նոր աշխարհը», Մարֆելլոն այժմ գտնվում է Լոս Անջելեսում, ֆիլմի համար անհրաժեշտ նյութեր հավաքելու նպատակով։ «Սարսափեցա, երբ առաջին անգամ լսեցի թե ինչ պատահած էր Հայերուն 1915-ին։ Սարսափս կրկնապատկվեցավ երբ հայտնագործեցի թե այս ողբերգությունը ինչպես թաքցված էր», ըսավ երիտասարդ բեմադրիչը։

«Նոր աշխարհ», 18 մարտի 1986

Իտալիայում Ավստրո-հայկական մշակութային ընկերության նախաձեռնությամբ տեղի է ունեցել հայ ժողովրդի նշանավոր բարեկամ, դոկտոր Յոհաննես Լեփսիուսի մահվան 60-ամյակին նվիրված դիտաժողով։

Մերանո քաղաքում ապրիլի 5—6-ին Եվրոպայի դանազան գաղութներից ժամանած բազմաթիվ հայ պատվիրակների մասնակցությամբ կատարվել է Յոհաննես Լեփսիուսի շիրիմին խաչքարով դրված հուշատախտակի բացումը։ Խաչքարը նվիրել է Վազգեն Ա կաթողիկոսը։

Ապրիլի 5-ին Մերանոյի ավետարանական եկեղեցում բացվել է դիտաժողով, որի առաջին բանախոսն է եղել դոկտ. Հերման Գոլցը։ Կանգ առնելով XIX դարի վերջի և XX դարի սկզբին հայ-գերմանական փոխհարաբերությունների վրա, նա մասնավորապես նշել է Լեփսիուսի և մասամբ էլ Ֆ. Վերֆելի դերը։

«Արարատ», 23 մայիսի 1986

Ավստրալիա

Թեքեյան մշակութային միության Սիդնեյի մասնաճյուղը 1986 թ. փետրվարի 15-ին սկսել է լույս ընծայել իր «Միություն» պաշտոնաթերթը, բաղկացած 8 էջից։

Ինչպես հայտնում է «Լրաբերը», «Թերթին նպատակն է Սիտնիի, Մելպուրնի և Բրրթի հայ համայնքներուն կյանքը պատկերացնել և միաժամանակ ամփոփ լրատվությունը կատարել Հայաստանի Լ. արտասահմանի առօրյա կյանքին։ «Միության» առաջին համարը ունի խմբագրական, որում նշվում է թերթի նպատակն ու ուղղությունը, զետեղված են լուրեր Սիդնեյի Թեքեյան մշակութային միության և Հայկական բարեգործական ընդհանուր միության գործունեության մասին, արտասահմանյան լուրեր ու հոդվածներ և այլն։ «Միությունը» առայժմ լույս է տեսնում տրպես ամսաթերթ։

«Լրաբեր», 8 մարտի 1986

«Նոր աշխարհ», 18 մարտի 1980

Ճապոնիա

Տոկիոյի համալսարանի հնդեվրոպական լեզուների մասնագետ, պրոֆեսոր Նապուո Սաթոհը ճապոներեն լեզվով լույս է ընծայել իր «Հայաստան՝ երկիր մարդկային ծննդոց և աղետների» վերնագրով գիրքը։ Ինչպես հայտնում է «Երևանը», գիտնականը մտադիր է Տոկիոյում ստեղծել հայ-ճապոնական մշակութային կապի կենտրոն, տեղի հայ փոքրաթիվ գաղութի անդամների մասնակցությամբ։

«Երևան», 4 հոկտեմբերի 1986

Ա Մ Ն

Փասադինայում 1985 թ. դեկտեմբերի 1-ին ՌԱԿ-ի Ամերիկայի արևմտյան շրջանի շրջանային վարչության նախաձեռնությամբ նշվել է արմենական կուսակցության հիմնադրության հարյուրամյակը։ Այս կապակցությամբ սփյուռքահայ շատ գաղթօջախներում կազմակերպվել են շքեղ հանդիսություններ, լույս են ընծայվել գրքեր, հոդվածներ։

«Սարդարապատ», 8 հունվարի 1986

Ուստրի (Մասաչուսետս) արվեստի թանգարանն իր ցուցասրահներից մեկը տրամադրել է հայկական գորգերին։ Այդտեղ դոկտ. Լյուսի Տեր-Մանվելյանը դասախոսել է «Հայկական գորգագործության արվեստը» նյութի շուրջը։

«Արև», 10 հունվարի,
21 օգոստոսի 1986

Դետրոյտի բարեգործականի մասնաճյուղը 1985 թ. դեկտեմբերին մեծ հանդիսությամբ նշել է Բաֆֆու ծննդյան 150-ամյակը։ Բաֆֆու ստեղծագործության մասին ելույթ է ունեցել Ա. Ջելեպյանը, գեղարվեստական բաժնին մասնակցել են ասմունքողներ, երգիչներ։

«Նոր աշխարհ», 28 հունվարի 1986

Դետրոյտում հայկական ֆիլմի հիմնարկության մի խումբ աշխատողներ տեսագրել են Դետրոյտի շրջանում բնակվող մի քանի հայ վերապրողների հուշերը, որոնցից ուշադրության են արժանի 97-ամյա ծերունի ականատեսի վկայությունները 1895-ի Վանի հերոսամարտի մասին։ Մինչ այժմ ողջ Միացյալ Նահանգներում կատարվել են ավելի քան 180 տեսագրումներ։

«Արև», 30 հունվարի 1986

Ուոթրթաունի հայոց եկեղեցում ցուցադրվել են կիլիկյան հայկական բերդերի և հուշարձանների գունավոր վերատպությունները, որոնք վերցված են «Հայկական ճարտարապետության արխիվները» հաստատությունից։

«Արև», 30 հունվարի 1986

Նյու Յորքի «Աշոտ» հրատարակչությունը վերջերս հրատարակել է Եղիշե Չարենցի երկերի ընտրանին անգլերեն լեզվով։ Թարգմանությունը կատարել են Մարզպետ Մարկոսյանը և Ջեք Անդրեասյանը։

«Արև», 15 փետրվարի 1986

Վաշինգտոնում հունիսի 18—22-ը մեծ հանդիսավորությամբ նշվել է Հայկական բարեգործական ընդհանուր միության 80-ամյակը։ Այս առիթով պատգամավորներ են ժամանել Փարիզից, Կանադայից, Միացյալ Նահանգների բազմաթիվ նահանգներից, Հարավային Ամերիկայից, Եգիպտոսից, Փղոսկրյա Ափից։ Միության ցկյանս նախագահ Ալեք Մանուկյանի հրավերով հունիսի 21-ին կայացել է պաշտոնական եզրափակիչ ճաշկերույթ, որին մասնակցել են բազմաթիվ անվանի գործիչներ և հյուրեր։

«Մասիս», 28 հունիսի 1986

Թուրքիա

«За рубежом» շաբաթաթերթում կարդում ենք. «Բրիտանիկա» հանրագիտարանի թուրք հրատարակիչը չէր ենթադրում, որ դա նրան կնստեցներ մեղադրյալի աթոռին։ Բանն այն է, որ հանրագիտարանում հիշատակություն կա Հարավային Անատոլիայում XII դարում գոյություն ունեցած ինքնուրույն հայկական պետականության մասին։ Պետական մեղադրողը, գրում է Ստոկհոլմի «Դագենս Նյուխետեր» լրագիրը, պահանջել է հրատարակչին դատապարտել չորս և կես տարվա բանտարկության «սեպարատիզմ պրոպագանդելու» և բնակչության «ազգային-հայրենասիրական զգացմունքները վիրավորելու» համար։

«За рубежом», № 13, 1987, էջ 24

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ (ԴԵՐՈՅԱՆ)